

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.



- 1) համադրման սանդղակ
- 2) լեռնագիծ
- 3) ռելիեֆի կտրվածք (պրոֆիլ)
- 4) հորիզոնական

2 Հյուսիսարևմտյան կողմի ազիմուտը հավասար է.

- 1) 315°
- 2) 180°
- 3) 135°
- 4) 45°

3 Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 3,7 սմ է, իսկ իրականում՝ 1850 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.

- 1) 1 : 50 000 000
- 2) 1 : 50 000
- 3) 1 : 500 000
- 4) 1 : 5 000 000

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտին 1 ժամով առաջ է նախորդից:
- 2) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
- 3) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 4) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:

(77-78) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

77 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

78 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

(79-80) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկը կատարել 5°-ով).

79 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

80 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

75 Քարտեզում ՀՀ կլիմայի ո՞ր տիպն է նշված Ա տառով.



- 1) չոր խիստ ցամաքային
- 2) ցուրտ լեռնային
- 3) ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային
- 4) բարեխառն լեռնային

76 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 690 000 գ, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 30 000 հա: Որքա՞ն կլիմի միջին բերքատվությունը:

5 Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.

- 1) խառնարան
- 2) մագմա
- 3) լավա
- 4) մղանցք

6 Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունը կոչվում է.

- 1) ամպամածություն
- 2) մթնոլորտային ճնշում
- 3) կլիմա
- 4) օդային զանգված


7 Լավային հոսքից կամ լեռնալանջի փլվածքից գետի հունը փակվելու հետևանքով առաջացած լիճը կոչվում է.

- 1) մնացորդային
- 2) արգելափակման
- 3) խառնարանային
- 4) հնահունային

8 Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի + 11°-ի, եթե նույն պահին Արագածի գագաթին – 4° է (յուրաքանչյուր 1000 մ-ին ջերմաստիճանի փոփոխությունն ընդունել 5°).


- 1) 1000 մ
- 2) 1090 մ
- 3) 1900 մ
- 4) 1009 մ

9 Նկարում հարթավայրի ո՞ր տեսակն է պատկերված Ա տառով.



- 1) սարահարթ
- 2) ցածրավայր
- 3) դաշտավայր
- 4) բարձրավայր

10 «Քամիների վարդում» հորիզոնի ո՞ր կողմից է ամենից շատ փչել քամին.



- 1) հարավարևմտյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևելյան

11 «Մայրցամաք — թերակղզի» գույգերից ընտրել սխալը.

- 1) Ավստրալիա — Քեյփ Յորք
- 2) Աֆրիկա — Սոմալի
- 3) Եվրասիա — Ալյասկա
- 4) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա

12 Ճնապողգուլային հողերը բնորոշ են.

- 1) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին
- 2) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին
- 3) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին
- 4) մերձարևադարձային գոտու սավաննաների և նոսր անտառների տարածման շրջաններին

71 Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Լեհաստանը և Չեխիան
- 2) Նիդերլանդները և Իրանը
- 3) Ֆրանսիան և Գերմանիան
- 4) Եգիպտոսը և Թուրքիան

72 Հողերի էրոզիայի պատճառ կարող են լինել.

- 1) քարամաքրումը
- 2) արոտավայրերի գերարածեցումը
- 3) աղակալած հողերի լվացումը
- 4) ագրոանտառաբարելավումը

73 Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներ են.

- 1) հրաբխի ժայթքումը
- 2) ապարների քայքայումը
- 3) արդյունաբերությունը
- 4) փոշեհողմերը

74 Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.



- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

- 66 **ՀՀ կլիմայի վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
 - 2) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
 - 3) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
 - 4) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին:

- 67 **ՀՀ բնակչության վերաբերյալ n^o ր պնդումն է սխալ.**
- 1) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:
 - 2) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98 %-ը հայեր):
 - 3) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
 - 4) Ամենաբարձրադիր բնակավայրը Տավուշի մարզում է:

- 68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:
 - 2) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
 - 3) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջեկերը:
 - 4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:

- 69 **Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.**
- 1) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
 - 2) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:
 - 3) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:
 - 4) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:

- 70 **Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.**
- 1) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
 - 2) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը
 - 3) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները
 - 4) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները

- 13 **Այս սառը օվկիանոսային հոսանքը ձգվում է Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափերի երկայնքով և ունի հյուսիսից հարավ ուղղություն: Այն ողողում է համանուն կղզեխմբի ափերը: Ո՞ր հոսանքն է.**
- 1) Կանարյան
 - 2) Ասեդի հրվանդանի
 - 3) Լաբրադորյան
 - 4) Սոմալիի

- 14 **Ո՞ր պնդումն է սխալ.**
- 1) Սուեզի պարանոցը միացնում է երկու մայրցամաք:
 - 2) Կարմիր ծովը ողողում է երկու աշխարհամասերի ափեր:
 - 3) Միջերկրական ծովը ողողում է երեք աշխարհամասերի ափեր:
 - 4) Զիբրալթարի նեղուցը միացնում է երկու օվկիանոսների ջրեր:


- 15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Արևմտյան քամին արևադարձային լայնություններից դեպի բարեխառն լայնություններ փչող քամին է:
 - 2) Մուսսոնը օրվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
 - 3) Լեռնահովտային քամիներն ակտիվանում են հասկապես տարվա ցուրտ կեսին:
 - 4) Պասսատը տարվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:

- 16 **«Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Գվիանական սարահարթ — Աֆրիկա
 - 2) Մեծ հարթավայրեր — Ասիա
 - 3) Պադանի դաշտավայր — Ավստրալիա և Օվկիանիա
 - 4) Մերձատլանտյան դաշտավայր — Ամերիկա

- 17 **«Գետ — վտակ» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Ամազոն — Մարանիոն
 - 2) Վոլգա — Դնեստր
 - 3) Միսիսիպի — Սուրբ Լավրենտիոս
 - 4) Նիգեր — Շարի

- 18 **Լավրասիայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**
- 1) Հարավամերիկյանը
 - 2) Չինականը
 - 3) Հնդկականը
 - 4) Աֆրիկա-Արաբականը

19 Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.



- 1) Պարագվայ
- 2) Պարանա
- 3) Օրինկո
- 4) Ամազոն

20 Քարտեզում Ը տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Պերու
- 2) Բոլիվիա
- 3) Կոլումբիա
- 4) Ուրուգվայ

21 Այն երևույթը, երբ բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիությանը, առկա է բնակչության նեղ վերարտադրություն և բնակչության թվի նվազում, կոչվում է.

- 1) ժողովրդագրական արտահոսք
- 2) ժողովրդագրական իրավիճակ
- 3) ժողովրդագրական պայթյուն
- 4) ժողովրդագրական ճգնաժամ

62 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Առավել խիտ են բնակեցված երկրի արևելյան շրջանները:
- 2) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 3) Բնակչության թվով երկրորդ ազգը պարսիկներն են:
- 4) Բնակչության թվով ամենամեծ քաղաքը Անկարան է:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

Այս պետությունն աշխարհի առաջատարներից է նավթի արդյունահանմամբ և արտահանմամբ: Բնակչության մեծամասնությունը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Երկրի ներքին շրջանները բնութագրվում են չոր մերձարևադարձային ու արևադարձային կլիմայով: Աշխարհի առաջատարներից է ոչխարների և այծերի գլխաքանակով: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Իրանը
- 2) Թուրքիան
- 3) Իրաքը
- 4) Սաուդյան Արաբիան

64 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Միջլեռնային գոգավորություններում ամռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 2) Բարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից:
- 3) Հայկական լեռնաշխարհում տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
- 4) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 400–500 մմ է:

65 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավում տարածվում է Կուր–արաքսյան դաշտավայրը:
- 2) Հարավ–արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:
- 3) Զբաղեցնում է մոտ 29 հազ. քառ. կմ մակերես:
- 4) Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:

56 Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ավերի կլիման.

- 1) մուսսոնային է
- 2) չոր մերձարևադարձային է
- 3) խոնավ մերձարևադարձային է
- 4) միջերկրածովային է

57 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը (+58,1°) գրանցվել է հասարակածային գոտում:
- 2) Կիլիմանջարոն գործող հրաբուխ է:
- 3) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
- 4) Աֆրիկայի ամենախոնավ շրջանը Դրակոնյան լեռների հյուսիսարևելյան լանջերն են:

58 Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.

- 1) Օբ, Ենիսեյ, Լենա
- 2) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ
- 3) Ինդոս, Եփրատ, Գանգես
- 4) Դանուբ, Կուր, Ամուր

59 Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Իտալիան և Ճապոնիան
- 2) Բանգլադեշը և Հնդկաստանը
- 3) Կամերունը և Պակիստանը
- 4) Նիգերիան և Կոնգոն

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:
- 2) Հինդուիզմը և սինտոիզմը ազգային կրոններ են:
- 3) Իրանի բնակչության մեծ մասը դավանում են իսլամի շիա ուղղությունը:
- 4) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:

61 Ածուխ արդյունահանող առաջատար երկիր է.

- 1) Աֆղանստանը
- 2) Հնդկաստանը
- 3) Բանգլադեշը
- 4) Պակիստանը

22 Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական, մշակութային և ինքնության զգացողության ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է.

- 1) ազգերի միաձուլում
- 2) վերարտադրություն
- 3) ազգային համախմբում
- 4) միգրացիա

23 Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրաէներգիայի զգալի մասը արտադրվում է ակններում: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Իսպանիան
- 2) ՌԴ-ն
- 3) Ֆրանսիան
- 4) Գերմանիան

24 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 10 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 25 մլն: Երկրի ուրբանիզացման մակարդակը կկազմի.

- 1) 10 %
- 2) 50 %
- 3) 40 %
- 4) 25 %

25 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) չինացի — դաոսականություն
- 2) թուրք — մահմեդականություն
- 3) իտալացի — քրիստոնեություն
- 4) հրեա — բուդդայականություն

26 «Պետություն — մայրաքաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թուրքիա — Ստամբուլ
- 2) Բուլղարիա — Բուդապեշտ
- 3) Լիտվա — Վիլնյուս
- 4) Սերբիա — Զագրեբ

27

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
- 2) հաստոց — մետաղաձուլություն
- 3) պլաստմասսա — մեքենաշինություն
- 4) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն

28

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրի հավատացյալ բնակչության 90 %-ը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը:
- 2) Աղքատ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 4) Անդրիրանական գազամուղով երկիրը Եվրոպայից գազ է ներմուծում:

29

Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

- 1) ԱՄՆ-ին և Կանադային
- 2) Նիգերիային և Ռուանդային
- 3) Ռուսաստանին և Ուկրաինային
- 4) Ֆրանսիային և Գերմանիային

30

Ունիտար պետություններ են.

- 1) ԱՄՆ-ը և Ավստրալիան
- 2) Գերմանիան և ՌԴ-ն
- 3) Կանադան և Ֆրանսիան
- 4) Հայաստանը և Ճապոնիան

31

«Պետություն — ջրաէլեկտրակայան» գույգերից ընտրել սխալը.

- 1) Բելառուս — Բրատսկ
- 2) Չինաստան — Երեք կիրճեր
- 3) ՌԴ — Կրասնոյարսկ
- 4) Բրազիլիա — Իտայպու

32

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերին բաժին է ընկնում ամբողջ մշակվող հողատարածքների ավելի քան կեսը:
- 2) Աշխարհում թելատու մշակաբույսերից ամենատարածվածը վուշն է:
- 3) Նոր զարգացող երկրների գյուղատնտեսությունը զարգանում է ինտենսիվ ուղիով:
- 4) Ցորենի ցանքատարածությունների տեղաբաշխումը համընկնում է բրնձի ցանքատարածություններին:

Բ մակարդակ

51

Մեպտեմբերի 23-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 2) հասարակածային լայնությունները
- 3) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները
- 4) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները

52

Երևան (արլ. ե. 44°30') և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 4 ժամ
- 2) 1 ժամ
- 3) 2 ժամ
- 4) 3 ժամ

53

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:
- 2) Հս. լ. 66°30'-ից հյուսիս և հվ. լ. 66°30'-ից հարավ բևեռային գիշերների ու ցերեկների տևողությունը կրճատվում է:
- 3) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 4) Երևանի գոտիական ժամանակն առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:

54

Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդումը.

- 1) արևադարձային կլիմա — 400–500 մմ տեղումներ — անապատներ
- 2) բարեխառն ծովային կլիմա — 800–1000 մմ տեղումներ — լայնատերև անտառ
- 3) մերձարկտիկական կլիմա — 200–300 մմ տեղումներ — տափաստան
- 4) բարեխառն մուսսոնային կլիմա — 600–800 մմ տեղումներ — սավաննա


55

Ո՞ր շարքի ջրային ավազաններն են պատկանում Հնդկական օվկիանոսին.

- 1) Հարավչինական ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 2) Կարմիր ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 3) Բենգալական ծոց, Արաբական ծով, Դեղին ծով
- 4) Ադենի ծոց, Կարմիր ծով, Դեղին ծով

49

Ո՞ր լեռնանցքն է քարտեզում նշված *Բ* տառով.



- 1) Պուշկինի
- 2) Սելիմի
- 3) Սևանի
- 4) Ջաջուռի

50

Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Արգնու
- 2) Մեծամորի
- 3) Քանաքեռի
- 4) Վանաձորի

33

Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Իրանը և Սիրիան
- 2) Ավստրիան և Հունգարիան
- 3) Հնդկաստանը և Բանգլադեշը
- 4) Քենիան և Եթովպիան

34

Պողպատի արտադրությամբ առաջատար երկրներ են.

- 1) Կանադան և Բրազիլիան
- 2) Իտալիան և Իրանը
- 3) Չինաստանը և Ճապոնիան
- 4) Հնդկաստանը և Պակիստանը

35

Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի մեջ չի մտնում.

- 1) Արարատ լեռնազանգվածը
- 2) Կարսի սարահարթը
- 3) Սյունիքի բարձրավանդակը
- 4) Գեղամա լեռնավահանը

36

«Գետ — հոսքի ավազան» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Արաքս — Պարսից ծոց
- 2) Տիգրիս — Կասպից ծով
- 3) Ճորոխ — Սև ծով
- 4) Եփրատ — Կասպից ծով

37

ՀՀ-ում ամենաշատ տեղումները լինում են.

- 1) չափավոր շոգ կլիմայի տիպում
- 2) բարեխառն լեռնային կլիմայի տիպում
- 3) ցուրտ լեռնային կլիմայի տիպում
- 4) խիստ ցուրտ (ձյունամերձ) կլիմայի տիպում

38

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 2) ՀՀ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:
- 3) ՀՀ-ում կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 4) ՀՀ-ում հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:

- 39 **Ո՞ր պնդումն է սխալ.**
- 1) ՀՀ ոչխարաբուծությունը հիմնականում տեղաբաշխված է նախալեռնային և լեռնային շրջաններում:
 - 2) ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ բաժինը պայմանավորված է հիմնականում մակերևույթի լեռնային բնույթով:
 - 3) ՀՀ գինու-կոնյակի արտադրությունը հիմնականում տեղաբաշխված է արտադրանքի սպառման շրջաններում:
 - 4) ՀՀ-ում պտղաբուծությամբ զբաղվում են բոլոր շրջաններում՝ մինչև 2100 մ բարձրությունները:

- 40 **ՀՀ տրանսպորտում բեռնաշրջանառությամբ առաջինն է.**
- 1) գետային տրանսպորտը
 - 2) երկաթուղային տրանսպորտը
 - 3) ավտոմոբիլային տրանսպորտը
 - 4) օդային տրանսպորտը

- 41 **Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.**
- 1) լեռնատափաստանային
 - 2) կիսաանապատային
 - 3) անտառային
 - 4) ալպյան և մերձալպյան

- 42 **Կոտայքի մարզը արդյունաբերության ո՞ր արտադրությամբ հանրապետությունում առաջատար դեր չի խաղում.**
- 1) պահածոների արտադրություն
 - 2) հանքային ջրերի արտադրություն
 - 3) ցեմենտի արտադրություն
 - 4) էլեկտրաէներգետիկա

- 43 **ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունը ամենաբարձրը.**
- 1) 1500–2000 մ
 - 2) 1000–1500 մ
 - 3) 2000–2500 մ
 - 4) մինչև 1000 մ

- 44 **Քաղցրահամ ջրի պաշարներով հարուստ է.**
- 1) Իրանը
 - 2) Սաուդյան Արաբիան
 - 3) Կանադան
 - 4) Ուզբեկստանը

- 45 **Մթնոլորտի աղտոտվածության հետևանք չէ.**
- 1) ջերմաստիճանային շրջադասությունը
 - 2) թթվային անձրևը
 - 3) սմոգը
 - 4) ջերմոցային էֆեկտը

- 46 **Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.**
- 1) կանաչ տարածքների ընդարձակումը
 - 2) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
 - 3) ցեմենտի արտադրության ավելացումը
 - 4) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը

- 47 **Հողաբարելավման միջոցառում(ներ) չէ(չեն).**
- 1) թեք լանջերի երկայնակի հերկումը
 - 2) քարամաքրումը
 - 3) հակաէրոզիոն միջոցառումները
 - 4) քիմիական մելիորացիան

- 48 **Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.**
- 1) աշխատանքի միջոցներ
 - 2) բնական ռեսուրսներ
 - 3) արտադրողական ուժեր
 - 4) բնական պայմաններ